

## — ԲԱԺԱՆՈՒՄ —

Երբ փրբթի սիրող սիրսերու շրջան,  
Անծանօթ ձեռքէ մը կարծես խրված .  
Մեր հոգիներու դուռներուն դիմաց,  
Կը կախէ վիճակ իր լուռ նըրագարան:

Իզո՛ւր կ'որոնենք խորը մեր սիրսին,  
Մասն անէացած մեր եղանկութեան,  
Ու բացակայի կարօտն անսահման  
Հին սիրոյ պէս հոն, կ'արթննայ ուժգին:

Յիշատակներ լոկ անցեալին անյոյս,  
Հորիզոններէն մեր հոգիներու,  
Կ'անցնին անըտուկ՝ ոսկի ամպերու  
Կարաւաններուն պէս անըրջասոյզ:

Երբ փրբթի շրջան սիրող սիրսերուն,  
Խոր գերեզմանի մ'առջեւ մըթասուեր,  
Հոգիներուն մէջ հրեշտակ մ'ոսկենիւր,  
Վաղուան յոյսերուն կ'երգէ ալէլու:

ԵՂԻՎԱՐԴ

## ՏԱՂ ՑՆՄՈՒԹԵԱՆ ՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ

(ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ)

Մըռա՛յլ է, ձիւն է, սրտում ու փայտութիւն է յաւէս՝  
Յիշատակին մէջ անոր ուր կայ լուսնդ իրիկուն.  
Ու երազի մը ժըպիսը հեռաւոր այն նամբուն,  
Ուրկէ անցաւ կարաւանը սիրոյ ջիւնջ երգին հետ:

Հոն լրութիւնը բացաւ, իր շրջանները փառէ,  
Անոր դէմքեր կը յառին՝ սուրբի դէմքեր եւ զրույ,  
Առանց ոսկերը հոգին ծաղիկներէն բաժնելու,  
Յիշատակին մէջ անոր աղջիկ մը կոյր կը պարէ:

Քոչուններու տօն մը կայ, մութ լեռներու ծոցին մէջ,  
Հէքեքի վառ ոսկիով անոր նըրագն է անեղջ,  
Գարունը ե՛րբ է անցեր ծառերուն հետ մըրկոս:

Ի՛նչ համբոյրներ ծաղկեցան, անոր սրտին հրայրով,  
Ու կոյր աղջիկը այսպէս պիտի պարէ՝ սրտաթով  
Պարսէզին մէջ իր մահուան ուր կայ լուսնդ Առաւօտ:

ԱՐՄԷՆ ԵՐԿՍԹ